

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱՆՈՒՄՆԵՐ

Վ. Ջ. Ղազարյան

Խ. ԱՐՈՎՅԱՆԸ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Խաչատուր Աբովյանը պատկանում է այն գործիչների թվին, որի մասին համեմատաբար շատ է գրվել: Սակայն մինչ այժմ էլ կան հարցեր, այդ թվում նաև որոշ առարկության տեղիք տվող, որոնք սպասում են դեռ իրենց լուսաբանման: Տակավին իր լուծմանը սպասող նրա անհայտացման առեղծվածը բազմաթիվ իրարամերժ կարծիքներ է առաջացրել: Հայ մեծ լուսավորչի կյանքի ու գործունեության ուսումնասիրման և արժեքավորման գործում իրենց վաստակը ներդրած բազմաթիվ հեղինակներ (Աշ. Հովհաննիսյան, Ա. Տերտերյան, Ե. Շահադիզ, Գ. Աբով, Վ. Պարտիզունի, Պ. Հակոբյան և ուրիշներ) Աբովյանի և ցարական դրաքննության փոխհարաբերության մասին խոսել են հարակցված ձևով, նպատակ չունենալով առանձին ուսումնասիրության նյութ դարձնել այն: Մեր հոգվածի նպատակն է հնարավորին չափ մանրամասն լուսաբանել այդ հարցը:

Ընդունված տեսակետ է, որ Աբովյանի մասնավոր պանսիոնի փակումը և ընդհանրապես նրան հալածելու բուն պատճառը հայ հոգևորականության սոցիալությունն էր, իր պաշտոնակիցների շար նախանձը և ցարական տեղական աստիճանավորների ցուցաբերած բյուրոկրատիկ վերաբերմունքը: Ընդունված է նաև այն, որ Աբովյանը Դորպատից անմիջապես Հայաստան չեկավ և մնաց Թիֆլիսում գլխավորապես կաթողիկոս Հովհաննես Կարբեցու անբարյացակամության պատճառով: Որպես այդ տեսակետի անառարկելի ապացույց նրա կողմնակիցները վկայակոչում են այն հայտնի խոսքերը, որ կաթողիկոսը Թիֆլիսում ասել է Աբովյանին. «Հրամանաւ զա՞ս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ... դու լաւ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել ղնոսա չէ քո գործ» (այս խոսքերը մեջ է բերել Աբովյանը Աշտարակեցուն գրած նամակում)¹:

Այլ խոսքով, Աբովյանի նկատմամբ եղած հալածանքը իբրև թե ոչ մի կապ չունի Ռուսաստանում տեղի ունեցող ընդհանուր իրադարձությունների հետ, այլ կրում էր տեղական բնույթ՝ կապված առանձին անձանց բանսարկությունների հետ:

Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ 1836 թ. սեպտեմբերին, կաթողիկոսը էջմիածին մեկնելուց առաջ Աբովյանին ոչ թե մերժել, այլ ընդհակառակը, Թիֆլիսի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Մտեփանոս Արղուիսյանին պատվիրել է, որ միջոց տա նրան էջմիածին գնալու²: Նույն արքեպիսկո-

1 Տե՛ս Գիվան Խ. Աբովյանի, հ. 1, էջ 60—61, նաև Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 268: Այսուհետև՝ Գիվան ԽԱ և ԽԱ, ելժ:

2 Տե՛ս Տեր-Կարապետյան Ն., «Խաչատուր Աբովյան», Վփիսիս, 1911, էջ 177:

պոսին հղած 1837 թ. հունվարի 25-ի կոնդակում Կարբեցին ղրել է. «մեք ի վերադառնալ մերում այդրէն ական ունէաք թէ տիրացու խաշատուրն Աբովյանց զկնի դոյզն ինչ միջոցի ունի դալ յաթոռս րստ իւրեան խոստման, այլ զկնի այնորիկ ոչ ի նմանէ, և ոչ ի ձէնջ վասն նորա շրնկալաք տեղեկութիւն ինչ, այլ այժմ Բարեհաճութեամբ մերով ղրեաց Թոմայ Յովսէփին Ղորղանեանց պրօկուրորն սրբազան սինհոդոսի, զի նա եկեսցէ յաղաղս պիտանաւորութեան Աթոռոյս»³:

Այսպիսով ստացվում է, որ Կարբեցին ոչ թե մերժել, այլ էջմիածին է հրավիրել Աբովյանին: Բայց տեսնելով, որ ինչ-ինչ պատճառներով վերջինս չի կատարում իր խոստումը, կաթողիկոսը դատախազի միջոցով կրկնում է իր հրավերը:

Արդ, ինչո՞վ բացատրել այս առեղծվածը: Աբովյանը չէ՞ որ երգվել էր վերադառնալ Հայաստան, իր ժողովրդի գիրկը: Եվ որքան էլ հայ տարրը գերակշռեր Թիֆլիսում, այնուամենայնիվ, Աբովյանի համար չէ՞ որ այն Հայաստան չէր:

Նույն ժամանակաշրջանում գրած և հայրենիք մեկնող իր բարեկամներին մեկին նվիրված մի բանաստեղծության մեջ Աբովյանը երանի է տալիս Հայաստան մեկնողին և նրա հետ ջերմ ողջույն հղում հայրենիքին: Թափառականի նման տեղ ու դադարից զրկված բանաստեղծը տեսնում է հայրենիքը:

«Ե՞րբ արդեօք և ինձ լինիցի
Հանգչիլ ի ցոց նորա սիրուն»⁴:

Բանաստեղծությանը նա կցել է հայրենիք մեկնողին ուղղված մի նամակ, որտեղ գրել է. «Քեզ՝ քաղցր իմ բարեկամ դեռ ոչ մտեալ Քո ի ծոց հայրենեաց՝ պարտ էին յառաջել սակաւատող իմ այս բանք, այլ զբաղմունք բիրազգիք և հոգք ծանրաբեռինք յանձն եղեալն ինձ պաշտօնի՝ կապեալ կաշկանդեն զոտս իմ և ձեռս առ ի լնուլ զնպատակ ինչ ինչ առաջի եղեալ: Նոյն էր իմ և իղձ սիրամատոյց բանիք ուղեկցիլ և ընդ մերն ազնուածնունդ պրօկուրորի գերազնիւ Թովմայ Ղորղանովին... Չէ իմ կամք ցուցանել սովաւ զզօրութիւն չքաւոր իմ մտաց, այլ նկարագրել զբոբբոք դառնավիճակ սրտիս»⁵ և այլն:

Թիֆլիսաբնակ Թ. Ղորղանյանը էջմիածնի սինոդի դատախազ է նշանակվել 1836 թ. օգոստոսի 21-ին⁶ և նույն թվականի աշնանը, երբ տատրաստվել է մեկնել իր պաշտոնատեղին, իր իսկ վկայությամբ Աբովյանը, որ արդեն Թիֆլիսում էր, ցանկացել է ուղեկցել նրան Հայաստան: Սակայն, ինչ որ «ծանրաբեռնիչ հոգսեր» կաշկանդել են նրան իր նպատակը իրականացնելու: Աբովյանը հառաչել է այն բանի համար, թե ինչու ինքը իր հայրենիքում չէ, որ կարողանա այդ բանաստեղծությունը իր բարեկամին պատշաճ ձևով հանձնել նրա հայրենիք հասնելու օրը, այլ ստիպված Թիֆլիսից է ուղարկում նրան: Ինչո՞ւ, չէ՞ որ հայրենիքից նրան հրավիրում էր հայ եկեղեցու այն պետը, որի հետ նա կապում էր իր ծրագրերի իրականացումը:

3 Նույն տեղում, էջ 178:

4 ԽԱ, ԵԺԺ, հ. 1, էջ 157:

5 Նույն տեղում:

6 ՏԼՄ նույն տեղում, հ. 10, էջ 423—424:

Այս խնդիրը պարզաբանվում է Արուվյանի հետագա գործունեության լուսարանումով, գործունեություն, որ կապված էր Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնը զբաղեցնելու և իր կազմած դասադրքերի տպագրության հետ:

Պաշտոնական կարծիքի ուժ է ստացել նաև այն տեսակետը, ըստ որի Արուվյանի «Նախաշավիղի» սպագրության խափանման և գործածությունից հանելու ամբողջ մեղքը ընկնում է Թիֆլիսի դիմնագիտյի խորհրդի և հայ հոգեվորականության վրա, որովհետև, իբր թե, հանձին Բրոսսեի դրախտակա-նի, Պետերբուրգի ակադեմիան դրական դնահատական է տվել նրա դասադրքերին: Այլ խոսքով, դասադրքերի խափանումը ևս տեղական բնույթ է կրել:

Հետաքրքրականն այն է, որ այդ բոլորը որպես անառարկելի փաստ «հաստատվել» է իր իսկ՝ Արուվյանի կողմից: Այսպես, Ն. Աշտարակեցուն հղած 1845 թ. փետրվարի 15-ի նամակում, որը հիմք է ծառայել վերոհիշյալ տեսակետի համար, Արուվյանը գրել է, որ ինքը Դորպատից վերադառնալուց հետո Հովհաննես Կարբեցու մերժման հետևանքով մեկեկես տարի անգործության է մատնվել Թիֆլիսում, մնալով օրվա հացի կարոտ, և որ հակառակ իր կամքի, չբավորությունից դրդված, մտել է արքունական ծառայության: Նույն նամակում էլ նա մեջ է բերել Կարբեցու իրեն ուղղած մերժման խոսքերը: Բայց վերը տեսանք, որ Կարբեցին ոչ թե մերժել, այլ, ընդհակառակը, էջմիածին է հրավիրել Աբովյանին:

Չի հաստատվում նաև նամակի մեջ նշված մեկուկես տարի Աբովյանի անգործության մատնվելու փաստը: Աբովյանը Թիֆլիս է հասել 1836 թ. ամռանը՝ հունիսին, իսկ արքունական ծառայության է մտել 1837 թ. փետրվարի 12-ին: Այստեղ մեկեկես տարվա մասին խոսք լինել չի կարող: Բայց դրանից, Ֆ. Պարրոտին նվիրված իր գրաբար մի բանաստեղծության ծանոթագրության մեջ Աբովյանը գրել է. «Վերադարձեալ անտի (իմա՝ Դորպատից—Վ. Ղ.) յաշխարհ մեր ի 1836-ին սկսայ ըստ հոգւոյ երանելւոյն (իմա՝ Պարրոտի—Վ. Ղ.) հաւաքել առ իս զմանկունս ազգի ի Տփլիս առ ի կրթել և պատրաստել զնոսա ապագայ ուսուցիչ ժողովրդեան»:

1837 թ. Ս. Նազարյանին հղած Աբովյանի մի նամակից նկատվում է, որ նույն թվականի փետրվարի 10-ին նա դեռևս որոշած չի եղել անցնելու արքունական պաշտոնի (մի բան, որ արել է երկու օր հետո) և որ նա մերժել է Թիֆլիսի մասնավոր դպրոցներից մեկում 100 ռ. (արծաթ) աշխատավարձով դասավանդելու իրեն արված առաջարկը: Նազարյանին անհասկանալի է եղել Աբովյանի մերժումը, որովհետև 100 ռ. ժամանակին շոշափելի գումար է եղել մի սկսնակ, այն էլ անգործ ուսուցչի համար:

Այս բոլորը մեզ բերում է այն եզրակացության, որ Աբովյանը Դորպատից վերադառնալուց անմիջապես հետո հարկադրաբար մնալով Թիֆլիսում, հարմարվել է իրադրությանը և Պարրոտի պատվիրած ձևով աշակերտներ հավաքել ու մասնավոր պանսիոն բացել: Բայց որովհետև Աբովյանը ընդունված կարգով մասնավոր դպրոց բացելու ոչ իրավունք և ոչ էլ թույլտվություն է ունեցել, առաջ ապա մասին ոչ մի տեղ բացահայտ չի գրել: Եվ այդ է եղել պատճառը, որ պանսիոնի մասին առաջին տեղեկությունը Աբովյանի ողջ ծառան-դության մեջ արձանագրվել է նրա փակման առթիվ միայն:

Ուրեմն վերադարձից անմիջապես հետո Արուվյանը մասնավոր պանսիոն է բացել, այլապես մասնավոր դպրոցում պաշտոնի հրավիրման առաջարկի մերժումը նրա կողմից ոչնչով չի արդարացվում:

Այսպիսով, պարզվում է, որ ինչպես Կարբեցու մերժումը, այնպես է մեկուկես տարի անգործության մատնվելու մասին Աշտարակեցուն դրած Արուվյանի մտքերը չափազանցություններ են:

Անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Ե. Ո. Հեսսենմյուլլերի բարձրագրականության շնորհիվ Թիֆլիսում Արուվյանի սկզբնական Կործունեությունը համեմատաբար հաջող բնթացք է ունեցել: Լինելով առաջադեմ և հումանիստ մտածող, նա դիտակցաբար օժանդակել է Արուվյանի հայրենասիրական գործունեությանը:

Որպես դպրոցների վերատեսուչ Հեսսենմյուլլերը 1835 թ. բնդունված դպրոցական նոր կանոնադրությամբ պարտավոր էր խիստ հսկողություն սահմանել «ապօրինաբար բացված դպրոցների վրա», թույլ չտալ, որպեսզի առանց իշխանության հատուկ կարգադրության առանձին անհատներ մասնավոր դպրոց բացեն և այլն:

Հակառակ դրան, ինչպես ցույց են տալիս փաստերը, Հեսսենմյուլլերը ոչ միայն արգելել է Արուվյանի բացած մասնավոր պանսիոնը, այլև իր օրինադանություններով խրախուսել և նպաստել է Արուվյանին: Այդ ապացուցվում է նաև նրանով, որ Արուվյանի մասնավոր պանսիոնի մասին իշխանություններն իմացան միմիայն Հեսսենմյուլլերի ձերբակալությունից հետո՝ 1840 թ., Ենթարկվելով նրան փոխարինող Դեմենտևի հալածանքներին, Արուվյանը ստիպված հայտարարել է, թե փակում է պանսիոնը, բայց իրականում շարունակել է զաղտնի կերպով պահել այն:

Բացի դրանից, այն ժամանակ, երբ լուսավորության մինիստրի հրամանով բոլոր ուսումնական հաստատություններում դասավանդման միակ լեզուն ուսերենն էր հայտարարված, Հեսսենմյուլլերը Արուվյանին թույլ է տալիս իր տեսչության տակ գտնվող գավառական դպրոցում մտցնելու հայոց և վրաց լեզուների դասավանդում⁸:

Արուվյանի միջոցով գործին իրազեկ Պարրոտի պատասխան այդ բոլորի 1836 թ. դեկտեմբերին նրան դրած նամակում նշել է. «խնդրում եմ հազորդե՞ս և Զեռ դպրոցների արժանավոր պարոն վերատեսչին իմ խոնարհագույն և ամենաջերմ ողջույնները: Նույնպես սրտանց խնդրում եմ նրան, որ նա շարունակե վերաբերվել Զեռ բախտին սիրով և զիջողաբար»⁹:

Մեր կողմից բնդգծված Պարրոտի բառերը ցույց են տալիս, որ Հեսսենմյուլլերը տեղյակ է եղել Արուվյանի ամբողջ գործունեությանը և բնդառաջել հովանավորել է նրան:

Սակայն, ամեն ինչ տակնուվրա արեց Արուվյանի նկատմամբ Հեսսենմյուլլերի վերջին զիջողական խիղախ քայլը: Ցարական օրենքի համաձայն, յուրաքանչյուր տպագիր գիրք նախօրոք պետք է անցնել գրաքննության տարբեր, մեկը մյուսից դաժան օղակներով: Մինչդեռ անտեսելով այդ բոլորը, Հեսսենմյուլլերը 1838 թ. ինքնադուխ կերպով կարգադրություն էր արել Արուվյանի «նախաշավիղը» տպագրելու համար: Խ. Ֆրենկին հղած նամակում Արուվյանին

⁸ Տե՛ս Դիվան ԽԱ, հ. 2, էջ 222:

⁹ Դիվան ԽԱ, հ. 1, էջ 266:

յանը գրել է. «Հետևանքները կարգադրել էր սկսել այստեղ («Նախաշավիղի» — Վ. Ղ.) տպագրությունը, բայց երբ ինքն այն դժբախտ ճակատագրին հանդիպեց, ամեն ինչ մնաց անսկիզբ ու անվերջ»¹⁰:

1839 թ. հունվարին Հետևանքները ձեռնարկվեց և «Նախաշավիղի» տպագրությունը մնաց «անսկիզբ ու անվերջ» այսինքն մի քանի օրինակների լույս աշխարհ զայուց հետո տպագրությունը խափանվեց:

Այս փաստերը չեն խոստում արդյոք հստակ այն բանի, որ «դպրոցական շենքեր պատրաստելու համար նախատեսված» պետական 50 հազար ռ. գումարի մեջ, որի վատնման պատճառաբանությամբ մեղադրում էին Հետևանքներին, իրենց մի զգալի մասն են ունեցել նաև «Նախաշավիղի» տպագրության ծախսերը:

Այդ ապացուցվում է նաև հետազայում տեղի ունեցած իրադարձություններով: 1839 թ. հոկտեմբերի 9-ին Խ. Ֆրենին հղած նամակում Արուստյանը գրել է, թե առաջիկա փոստով ինքը պետք է ժողովրդական լուսավորության միևնույնությունը ուղարկի երկու գիրք «Նախաշավիղի» և Տապալական քերականությունը: Այնուհետև Ֆրենին հաղորդում է, որ ինքը անդրկովկասյան դպրոցների վերատեսչությունից առաջարկություն է ստացել Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնը զբաղեցնելու համար ակադեմիային դիմերտացիա ներկայացնել, բայց ժամանակի սղության պատճառով ուղարկում է իր ձեռքի տակ եղած պատրաստի վերահիշյալ գրքերը¹¹:

Հարց է ծագում՝ ինչու էր շահագրգռված դպրոցների վերատեսչությունը, երբ գավառական դպրոցում իրեն «շարդարացնող» ուսուցչին առաջարկում էր զբաղեցնել համալսարանի պրոֆեսորական պաշտոնը:

Խնդիրը պարզվում է, երբ ծանոթանում ենք Երրորդ բաժանմունքի պետի, լուսավորության միևնույնության, Թիֆլիսի գինավորական նահանգապետի և անդրկովկասյան դպրոցների վերատեսչության միջև տեղի ունեցած գրադրություններ: Հիշյալ գրություններից առաջինը հասցեագրված է անդրկովկասյան դպրոցների գլխավորին՝ գրված 1839 թ. հունիսի 19-ին, այսինքն՝ Արուստյանի նշված գրքերը Պետերբուրգ ուղարկելուց չորս ամիս առաջ: Գրությունը կազմել է Թիֆլիսի գինավորական նահանգապետը (համալսարանի գինավորական լուսավորության տնօրեն): Նահանգապետը գրում է, որ «հայ ազնվական» Խաչատուր Արուստյանը, ուրիշ մեծության բարձրագույն բարեհաճությամբ Գորպատի համալսարանն ավարտելուց հետո, շնայած արևելյան լեզուների ուսուցչի պաշտոնով նույն համալսարանում մնալու ձեռնառն առաջարկությանը, վերադարձել է հայրենիք և իրեն նվիրել այլազգիների մեջ «պտավետ գիտություններ տարածելու ջոկին»: Նահանգապետն այնուհետև հաղորդում է, որ այժմ ուսուցչի պաշտոնում աշխատելով Թիֆլիսի գավառական դպրոցում, Արուստյանը թարգմանել և մշակել է մի քանի շարադրություններ, որոնք չի կարողացել տպագրել նյութական միջոցների պակասության պատճառով: «Գինեթաղ-աղյուտանտ կոմս Բենկենդորֆը, — շարունակում է նա, — հաղորդելով այդ մասին կառավարչապետին, խնդրում է՝ ֆանի ու Արուստյանն այդպես նվիրված է մուսաստանին և թագավորին, օժանդակել, նպաստել նրան իրագործելու իր գովելի դիտավորությունները: Սրա

10 ԽԱ, ԵԼԺ, հ. 10, էջ 231:

11 ՏԵՊ ԽԱ, ԵԼԺ, հ. 10, էջ 231:

հետևանքով առաջարկում եմ վերատեսչությանդ՝ ստանալ ուսուցիչ Աբով-
յանից նրա պատրաստած շարադրությունների ձեռագրերը, քննել դրանք և
հզրակացությունը... ներկայացնել կառավարչապետին»¹²:

Այս գրությունից իմանում ենք, որ մինչև Աբովյանի զորքերի Պետեր-
բուրգ հասնելը, նրա մասին արդեն այնտեղ գիտեին, այն էլ ոչ այլ ոք, քան
Երրորդ բաժանմունքի պետն անձամբ:

Ավելի հետաքրքիր է երկրորդ գրությունը, որ պատկանում է լուսավո-
րության ղեկարտամենտին, հասցեագրված անդրկովկասյան զպրոցների
վերատեսչի պաշտոնակատարին: «Գեներալ-ադյուտանտ կոմս Բենկենդոր-
ֆը.— կարդում ենք այդ գրության մեջ.— հաղորդելով ժողովրդական լուսավո-
րության պարոն նախարարին, թե Թիֆլիսի ժողովրդական զպրոցի ուսուցիչ
հայ ազնվական հաշատուր Աբովյանը թարգմանել ու մշակել է... մի քանի...
շարադրություններ, բայց տակավին ի վիճակի չի եղել տպագրել նյութա-
կան միջոցների պակասության պատճառով. խնդրում է, որ դրա համար
ներան հատկացվի, եթե այդ հնարավոր լինի, որևէ նպաստ կառավարության
կողմից: Ժողովրդական լուսավորության ղեկարտամենտը, պարոն նախա-
րարի հրամանով, խնդրում է Ձեզ... պահանջել Աբովյանից տեղեկություն
ներա պատրաստած գրքերի մասին և նույնիսկ գրքերը նախօրոք քննելու հա-
մար ուղարկել այստեղ (Պետերբուրգ—Վ. Ղ.)...»¹³:

Գրությունը կազմված է 1839 թ. հունիսի 22-ին, այսինքն՝ համարյա
առաջին գրության հետ միաժամանակ: Այն ցույց է տալիս, որ ժանդարմե-
րիայի շեֆը նույն ժամանակամիջոցում Աբովյանի հորինած դասագրքերի
ձեռագրերը ձեռք բերելու համար միաժամանակ դիմել է և լուսավորության
մինիստրությանը և Թիֆլիսի գինվորական նահանգապետին:

Այսպիսով պարզվում է, որ Հեսսենմյուլլերի ձեռագրավորությունից և «նա-
խաշավիղի» տպագրության խափանումից հետո Երրորդ բաժանմունքի պե-
տին հայտնի էր դարձել, որ Աբովյանը ունի կազմած ձեռագրեր, որոնք էլ
նա ցանկացել է ձեռք բերել Պետերբուրգում քննելու համար:

Հեսսենմյուլլերին ձեռագրակալելուց հետո նրա պաշտոնը գրավեց տեղի
դիմնագիտի տեսուչ Ն. Տ. Դեմենտեր, որը Աբովյանի նկատմամբ տրամա-
դրված է եղել խիստ թշնամաբար:

Նվ ահա Դեմենտեր գրություն է ստանում ժողովրդական լուսավորու-
թյան ղեկարտամենտից և Թիֆլիսի գինվորական նահանգապետից, որպեսզի
Աբովյանից ստանա նրա պատրաստած դասագրքերի ձեռագրերը և ուղարկի
Պետերբուրգ քննության, ինչպես նաև բացատրություն նրա ստեղծագործա-
կան գործունեության մասին:

Խնդրո առարկա գործի վերաբերյալ երրորդ փաստաթուղթը ժողովրդա-
կան լուսավորության մինիստր Ուվարովի 1841 թ. փետրվարի 20-ի հաղոր-
դագրությունն է Անդրկովկասի կառավարչապետին¹⁴:

Այդ հաղորդագրությունից մանրամասնորեն տեղեկանում ենք, որ նա
ինքն է առաջարկել անդրկովկասյան զպրոցների վերատեսչությանը՝ Աբով-
յանից տեղեկություններ պահանջել նրա պատրաստած գրքերի մասին և

¹² Գիվան հԱ, հ. 1, էջ 208, նաև հ. Աբովյանի արխիվ N 560: Ընդգծումը մերն է:

¹³ Գիվան հԱ, հ. 1, էջ 210:

¹⁴ ՏԷ՝ս Գիվան հԱ, հ. 1, էջ 211—212:

դրանք ուղարկել Պետերբուրգ: Զվստահելով Աբովյանին, գրքերը Պետերբուրգ է ուղարկվել դպրոցների վերատեսչության միջոցով: Աբովյանը դարձյալ Ուվարովի պահանջով բացատրություն է տվել ընդհանրապես իր գրական գործունեության մասին, իսկ այդ գրքերը ինքը՝ Ուվարովը տվել է ակադեմիկոս Բրոսսեին ոչ թե գրախոսելու, այլ մեր կարծիքով՝ գրաքննելու, և նրանից ստացել է ցանկալի եզրակացություն:

Նախքան Բրոսսեի գրախոսականին անդրադառնալը ասենք, որ առերեւոյթ անմեղ, ավելի շուտ Աբովյանի օգտին, քան նրա դեմ թվացող այդ գրությունների մեջ ցարական աստիճանավորները շատ միտք են թաքցրել և առանց փակագծերը բացելու միմյանց հասկացել: Բենկենդորֆի կողմից Աբովյանով հետաքրքրվելու փաստը նահանգապետին ու դպրոցների վերատեսուչին հասկանալի է դարձրել, որ Աբովյանի անունն արդեն մտցված է Երրորդ բաժանմունքի սև ցուցակների մեջ: Նրանց համար պարզ է եղել, թե ինչ է նշանակում ժանդարմերիայի շեֆի այն ակնարկը, թե մերժելով արևելյան լեզուների ուսուցչի պաշտոնով Դորպատի համալսարանում մնալու իրեն արված առաջարկը, Աբովյանը վերադարձել է հայրենիք և նվիրվել բնիկների մեջ օգտավետ գիտություններ տարածելուն: Ժամանակի լեզվով այդ նշանակում էր, որ Աբովյանը սովորելով պետության հաշվին, խուսափել է զրադիմաց պետական վեցամյա պարտադիր ծառայությունից և բնիկներին լուսավորելու հանդուգն միսիա ստանձնել իր վրա: Իսկ Աբովյանի՝ Ռուսաստանին ու ցարին նվիրված լինելը և իր կազմած շարադրությունները սեփական միջոցներով տպագրելու հնարավորություն չունենալը նշանակում է, որ նա ոչ միայն խուսափել է պետական աստիճանավորությանը ծառայելու պարտականությունից այլև իր հանդուգն նպատակի համար կազմած դասագրքերն էլ ցանկացել է պետության հաշվին տպագրել:

Այսպիսով պարզվում է, որ ցարական գաղտնի ոստիկանությունը լավ էր անտղել Աբովյանին՝ սկսած նրա ծագումից մինչև պատանիների համար շարադրություններ կազմելը, և վերջիններս ձեռք բերելու համար գործի էր գրել լուսավորության մինիստրությանը և տեղի գինվորական իշխանություններին:

Աբովյանի գրքին Բրոսսեի տված գնահատականը բուն իմաստով չի հասկացվի, եթե չանդրադառնանք Ռուսաստանում տիրող այդ ժամանակվա գրաքննության կանոններին:

Դեկաբրիստական ապստամբությունից ահաբեկված նիկոլայ 1-ը երկրում աճող ղեմոկրատական միտքը կաղապարելու համար 1826 թ. մտցրեց գրաքննության նոր կանոնադրություն, որով արգելվում էին այն ստեղծագործությունները, որոնք վնասակար էին հավատի, զահի և «բարի վարքի» համար: Արգելվում էր այնպիսի երկերի հրատարակումը, որոնք կարող էին սասանել հարգանքը դեպի եկեղեցին, եվրոպական արքունիքները և նրանց կառավարությունները: Արգելվեց ոչ միայն պետական բարեփոխումների մասին ենթադրություններ անելը, պատմական փաստաթղթերի հրապարակումը գյուղացիական հարցի մասին գրելը, այլ նաև «տխմար ոճով գրված գրքերը» (книг за дурной слог)¹⁵:

¹⁵ S.L. Дациук Б. Д., Журналы «Отечественные записки» и «Современник», Москва, 1957, էջ 5:

Գրաքննության գլխավոր վարչությունում իշխող դիրք ունեւ Երրորդ բաժանմունքի պետը: Յուրաքանչյուր գրաքննիչ որեւէ ստեղծագործության մեջ ամենաշնչին կասկած գտնելու դեպքում պարտավոր էր նրա հեղինակի մասին անմիջապէս Երրորդ բաժանմունք հայտնել:

Յուլյց տալու համար, թե ինչ էր հասկացվում այդ կանոնադրության մեջ տեղ գտած «տխմար ոճի գրքեր» հասկացողության տակ, բերենք մի օրինակ. 1832 թ. վերջերին լույս տեսավ Կազակ Լուգանսկու (ռուս հայտնի բառարանագիր Վլադիմիր Դալի) որի մոր, քրոջ և մանավանդ եղբոր հետ այդ ժամանակ շատ մոտ հարաբերությունների մեջ էր Արուսյանը Դորոպատում, պատմվածքները, որոնց հիմնական խնդիրները հեղինակը համարում էր ռուսական ժողովրդական լեզվի պրոպագանդան: Գիրքը Բուլպարինի մատենության մեջ անմիջապէս իր վրա հրավիրեց Երրորդ բաժանմունքի ուշադրությունը: Մեզ մոտ մեծ աղմուկ է հանել մի գիրք, — կարդում ենք Երրորդ բաժանմունքի գրասենյակի դիրեկտոր ծովակալ Մորգվիլինովի Բենկենդորֆին գրած հաղորդագրության մեջ, — որի վերնագիրն է «Կազակ Լուգանսկու ռուսական պատմվածքները»: Գիրքը տպագրված է ամենահասարակ ոճով, լրիվ հարմարեցված ցածր դասակարգի՝ վաճառականների, զինվորների և սոլդատների համար: Նրա մեջ ծաղր է պարունակվում կառավարության նկատմամբ և գանգատ՝ զինվորի դառնադետ վիճակից»¹⁶:

Ճարի հրամանով Դալը ձերբակալվեց¹⁷: Եվ շնայած երկու զորեղ մարդկանց՝ թագաժառանգի դաստիարակ ժուկովսկու և Պարրոտի միջնորդությամբ նա ազատվեց «աշխարհիկ ինկվիզիցիայի» ճանկերից, բայց երկար տարիներ չկարողացավ իր անունով որեւէ գիրք հրատարակել:

Կարելի է նման օրինակների թիվը ավելացնել: Բայց բերվածն էլ բավական է ցույց տալու համար, որ ցարիզմը արգելում էր հատկապէս այն գրքերի տպագրությունը, որոնք գրված էին ժողովրդական լայն ղանգվածներին և գլխավորապէս աշխատավորական խավերին հասկանալի լեզվով: Ահա թե ինչու էր Արուսյանը գրել, թե իր կազմած դասագրքերը, գրված մանուկներից բացի նաև «ժողովրդի միջին դասի օգտագործման համար... բայց չեն թողնում հենց միայն նրա համար, որ դրանք գրված են հասարակ ժողովրդին՝ րնդհանուրին հասկանալի լեզվով»¹⁸:

Դալ ընտանիքին չափազանց մոտ կանգնած Արուսյանը չէր կարող չհամակվել Վ. Դալի ձերբակալման առթիվ նրանց ընտանիքի վշտով և չիմանար նրա «հանցանքի» բուն պատճառը:

Ֆրենին հղած վերոհիշյալ նամակում Արուսյանը գրել է, որ Տապուկական քերականության գործածական լինելու մասին ինքը չի կասկածում, իսկ «նախաշավիղի» նպատակի մասին անհրաժեշտ է համարում կցել գերմաներեն մի հոդված:

Այսպէս, ուրեմն, Արուսյանի տարակուսանքը իր երկրորդ գրքի՝ «նախաշավիղի» մասին է եղել և գլխավորապէս նրա աշխարհաբար, հասարակ ժողովրդին հասկանալի լեզվի համար: Այդ պատճառով էլ Արուսյանը ան-

¹⁶ Добровольский Л. М., Запрещенная книга в России 1825—1904 гг., Москва, 1962, էջ 32:

¹⁷ Ш. Լемке, Николаевские жандармы и литература 1825—1855 гг., էջ 29:

¹⁸ ԽԱ, ԵԼԺ, հ. 7, էջ 195:

հրաժեշտ է համարել դասագրքին կցել գերմաներեն բաղատրական, ուր և հիմնավորել է իր խոր գեոմերատական աշխարհայացքը¹⁹։

Ակադեմիկոս Բրոսսեն Աբովյանի հիմնավոր փաստարկումների ազդեցության տակ գրել է. «Այսքան ժամանակի ընթացքում, որ ես ակադեմիկոսի կոչում կրելու պատիվ ունեմ, ինձ ներկայացված են եղել գնահատության համար շատ հայ գրքեր... երբ ես քննել եմ այդ գրքերը, երբեք մտքով չեմ անցկացրել, որ ես շուտով ստիպված պիտի լինեմ փոխել կարծիքս... եթե ես այժմ վարդապետեմ եմ նոր լեզվի առավելությունների միտքը, այդ մեր հեղինակի շնորհիվ է, որ ներշնչել է ինձ դրա գաղափարը»²⁰։

Վերջում դրախտությունը նպաստավոր կարծիք է հայտնում Աբովյանի գրքերը տպագրելու մասին, պայմանով, որ հեղինակը դրանք վերամշակի իր ցույց տված ծրագրով։

Այս բոլորը, սակայն, Բրոսսեի Աբովյանի գրքերի գնահատման երևութական կողմն էր, արտաքին փայլը։ Իրականում նա երրորդ բաժանմունքի ուշադրությունը հրավիրեց ոչ միայն այդ գրքերի, այլ նաև Աբովյանի անձի վրա։

Բրոսսեն ստանձնելով նման գրքերի գնահատման պարտականությունը, դիտել, թե ինչ է նշանակում իր պրեզիդենտի տված դրախտությունը հանձնարարությունը և թե ինչ հետևանք կարող է ունենալ այդ հարցում թույլ տված ամենաշնչին սխալը։ Նա շատ լավ հիշում էր երկու տարի առաջ արևելագիտության զծով իր պաշտոնակից, Մոսկվայի համալսարանի ռեկտոր Բոլդիրյովի հետ տեղի ունեցած տհաճ պատմությունը, կապված «Տեխնոկոլում» Զաադակի «Փիլիսոփայական նամակների» տպագրության հետ, որի դրանք նա էր իր թույլ տված «սխալի» համար Բոլդիրյովը ոչ միայն զրկվեց պաշտոնից, այլ նաև բանտ նետվեց։

Այդ մտայնությամբ էլ Բրոսսեն մի խուսանավող դրախտություն է գրել Աբովյանի գրքերի մասին, ուր մի քանի տեղ շեշտել է, որ Աբովյանին ճանաչողը և գնահատողը ակադեմիկոս Ֆրենն ու իր՝ Բրոսսեի մյուս բնկերակիցներն են։ Ինչ մնում է իրեն՝ Բրոսսեին, ապա ինքը այնքան էլ բարձր չի գնահատում հայ ժողովրդական լեզուն, որով Աբովյանը ցանկացել է լուսավորել «հասարակ ժողովրդի բազմաթիվ դասը»²¹։

Ցարիզմի ընդհանուր քաղաքական ուղղությանը լավատեղյակ Աբովյանը միանգամայն ճիշտ էր կռահել ակադեմիային ներկայացրած իր դասագրքերի բախտը։ Բրոսսեն Աբովյանի կողմից գովելի քայլ համարեց միմիայն Տապալական քերականությունը («Նոր տեսական և գործնական քերականություն») հայերեն թարգմանելու միտքը։

«Այն ժամանակ, — գրում է Բրոսսեն, — երբ նախարարն այնպիսի եռանդով և ջանքով իրականացնում է այն միտքը, որ վերաբերում է կայսրության բոլոր համալսարաններում ուսուցիչի ուսումնասիրությանն ու վարդապետներ, հեղինակն իր այդ փորձով սկիզբ դնելով լեզվի ուսումնասիրությանը հայերի մեջ, ցույց է տալիս, որ նա հասկացել է իր ժամանակը և իր հայրենակիցների կարիքները»²²։ Աբովյանի կողմից իր հայրենակիցների կարիքներն ու ժամանակը հասկանալու տակ Բրոսսեն նկատի ուներ կայսրության փոքր

¹⁹ Տե՛ս նույն տեղում, հ. 5, էջ 45—50։

²⁰ Դիվան հԱ, հ. 1, էջ 320։

²¹ Տե՛ս Դիվան հԱ, հ. 1, էջ 317—321։

²² Դիվան հԱ, հ. 1, էջ 217։

ժողովուրդների նկատմամբ ցարական կառավարության ծրագրված ոռոսացման այն քաղաքականությունը, որը մեծ կրքոտությամբ իրագործում էր լուսավորության միսիստորը:

Սակայն Բրոսսեն իր գրախոսականի մեծ մասը նվիրեց «նախաշավի-վին»: Նա գրեց, որ հեղինակը պահանջում է, որպեսզի Հայաստանում հանվի հին, գրաբար, ժողովրդի համար վաղուց ի վեր մեռած և «նույնիսկ վնասակար» լեզուն, որը «միայն հոգևորականությունն է (և այդ ոչ առանց բացառության), որ գիտե և օգտագործում է», և որ՝ «նոր լեզվի ծխտումը և հնի պահպանումը պատճառ է դառնում թանձրամած տգիտության, որի մեջ խորասուզված է ժողովուրդը և ինքն իսկ հոգևորականությունը»²³:

Մի կողմ դրած գիտության, հումանիզմի շահերը, գիտնական ակադեմիկոսը լուսավորության իր խավարամիտ միսիստ-պրեզիդենտի առաջ լայնորեն բացում էր փակագծերը: Նա Ուլարովին բացատրում էր, որ Աբովյանը դեն նետելով կրոնական խնդիրներ բովանդակող գրքերը, որոնցից ժողովուրդը վերցնում է միայն իր ծիսական կողմը, պահանջում է ժողովրդական զանգվածներին հասկանալի լեզվով այնպիսի գրքերի գործածություն, որոնք գրված լինեն եվրոպական մշակույթի լավագույն գրքերի հիմունքներով: Եվ այս բոլորը այն ժամանակ, երբ, ըստ կայսրության մտադրության, Կազանը պիտի դառնա պետության ասիացի հպատակների քաղաքակրթության կենտրոն, և որտեղ «արաբ, թաթար, պարսիկ չին և մոնղոլ լեզուներն... իրենց լավագույն ներկայացուցիչների (միջոցով—Վ. Ղ.)... սովորեցնում են ասիացիներին գնահատելու իրենց հին գրական գանձերը: ...նրա այդպիսի պընդումները իսպառ թույլ չեն տալիս կարծել, որ նա ի վիճակի պիտի լինի պատվով կատարել իր պարտականությունները» Կազանի համալսարանի նոր բացվելիք հայագիտության ամբիոնում, որը զբաղեցնելու հավակնությամբ հեղինակը ներկայացրել է գրախոսվող գրքերը:

Բելինսկու արտահայտությամբ «թաթարական գրաքննության» պայմաններում, որտեղ ամենից առաջ արգելվում էին հակակրոնական, եկեղեցու հեղինակությունը տատանող գրքերը, Բրոսսեն գրեց, թե այդ գրքերից «պետք է դուրս ձգել այն տեղերը, որոնց մեջ նա (Աբովյանը—Վ. Ղ.) պախարակում է հայ հոգևորականության տգիտությունը և շար կամքը», այն էլ հայհոյանքների և վիրավորանքների միջոցով: «Ինձ թվում է,— շարունակում է Բրոսսեն,— որ ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ այն զորեղ արտահայտությունները, որոնցով հեղինակը նշավակում է Հայաստանի եկեղեցական լուսավորության բացասական կողմերը»²⁴: Այդ բոլորի հետ միասին նա նշեց նաև, որ Աբովյանի այդ հայացքները ավելի քան սառը ընդունելություն են գտել իր հայրենակիցների և մանավանդ հոգևորականության կողմից: Իսկ դա ժամանակի լեզվով նշանակում էր, որ Աբովյանը իր բոլոր հասկացողություններով ու հայացքներով միանգամայն դեմ էր գնում Հայաստանում ցարիզմի առայժմ միակ հենարանին՝ «Պոլոժենիեի» սոցիալական բովանդակությամբ:

Նիկոլայան դաժան պայմաններում աշխատող ամենաթափառ աստիճանավորի համար անդամ պարզ էր, ինչ մնաց Ուլարովի, թե ինչ է ակ-

23: Նույն տեղում, էջ 318:

24: Դիվան, հԱ, հ. 1, էջ 319—320:

նարկում զրախոսողի այն տողերը, ուր նա գրում է. «Եվ ահա հայտնվել է մի անհատ, որ առաքելություն է ստանձնել լուսավորելու իր ազգը», այն էլ այն ղեպքում, երբ լենինի բառերով ասած «Ռուսական կառավարությունը մի-միայն խավարի մեջ կարող էր սլահվել»²⁵:

Իր ազգին լուսավորելու Աբովյանի անսահման ջերմեռանդությունը մատնանշելուց հետո, Բրոսսեն հարց է տալիս. «Կիրականացվի՞ արդյոք նրա ցանկությունը»: Նրա հարցադրման վստահ տոնն իսկ ցույց է տալիս, որ ինքը չի կասկածում իր զրախոսականի թողնելիք ավերիչ հետևանքների մասին: Նա շատ լավ գիտեր ինչ է նշանակում Ուվարովին հայտնի դարձնել, թե զրախոսվող զրքերի հեղինակը հասկանալով, որ իր ազգի մտավոր զարգացումը Ռուսաստանի ձեռքումն է գտնվում, հանդգնաբար ստանձնել է նրան լուսավորելու առաքելություն, ուստի և զրքեր է կազմում հասարակ ժողովրդին մատչելի լեզվով, ըստ որում այդ նպատակի իրականացման համար նրան «չեն կասեցրել հայաժանքն ու հակառակությունները»:

Ամփոփելով Աբովյանի զրքերի մասին Բրոսսեի զրախոսականը, նշինք, որ չափազանց մեղմացրած կլինենք զրախոսողի դերը, եթե ասենք, որ նա խափանեց զրքերի տպագրությունը. դրա հետ միասին նա փաստորեն լուսավորության միևնույն իրազեկ դարձրեց.

1. Հանձին Աբովյանի՝ ցարական նորանվաճ գաղութային երկրամասում հայտնվել է մի անհատ, որն իր վրա հանդուզն առաքելություն է ստանձնել լուսավորելու իր ժողորդին, շրջանցելով եկեղեցու ազդեցությունը. 2. Նա դեմ է եկեղեցու պաշտոնական լեզվին, այդ լեզվից օգտվող կրոնավորներին համարում է հայերի թանձրամած տգիտության պատճառ և նրանց հայհոյելու մեջ չի ճանաչում ոչ մի սահման: 3. Նրա հայացքները միանգամայն հակադիր են Կազանի և ընդհանրապես համալսարանների համար կառավարության նախագծած խնդիրներին: 4. Նա ոչ միայն չի արհամարհում ժողովրդի հասարակ, բազմաքանակ դասը, այլև ողջ ջերմեռանդությամբ նվիրված է նրան լուսավորելու նպատակով իր նոր եղանակի ստեղծմանը: 5. Նա բմբոստ է դաստիարակության ընդունված մեթոդի կողքին իրենն առաջարկելու մեջ, որին չեն կասեցնում ոչ հայաժանքները և ոչ էլ հակառակությունները:

Իսկ ի՞նչ տարբերություն կար այն բանում, որ Բրոսսեն այդ բոլորը հաղորդում էր ոչ թե Բենկենդորֆին, այլ Ուվարովին: Տարբերությունը այն-բան էլ մեծ չէր. մեկը նույն հետադիմության տեսաբանն էր, տեսականորեն հիմնավորողը, մյուսը՝ դադանակի միջոցով նրա իրազործողը և այդ կարգից շեղվողներին իր «սև ցուցակի» մեջ մտցնողն ու համբարձողը:

Չմոռանանք, որ Բրոսսեի զրախոսականը ժանդարմական սովորական մատնություն չէր, «խիստ գաղտնի» վերտառությամբ, որպեսզի այնտեղ յուրաքանչյուր պարագա իր անունով կոչվի: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հետադիմությունը ևս չէր կարող իր իսկական դեմքով հանդես գալ, այն ևս իրեն փետրազարդում էր «ընդհանուրի բարօրության», «ճշմարիտ գիտության», «հայրական խնամքի», նույնիսկ «առաջադիմության» պիտակներով:

Աբովյանը Բրոսսեի տխուր դերը այդ ձևով էլ հասկացավ: Նա թեև տեղի իշխանություններին խփելու նպատակով գրել է, թե Ս. Պետերբուրգի ակա-

25 Լ. Լ. Ե. Ե., Երկեր, հ. 6, էջ 475, տե՛ս տողատակի ծանոթագրությունը:

դեմիան իր զրքերին լավ գնահատական է տվել ու հավանել²⁶, բայց Բողենշտեդտին ուղղած բացատրականում գրել է. «ակադեմիկոս Բրոսսեի գրա-խոսությունը թե հիշյալ հոգվածի (իմա՝ «նախաշավիղին» կցած գերմաներեն հոգվածի—Վ. Ղ.) և թե բնդհանրապես իմ մյուս երկերի մասին դուք, մարդասեր բարեկամ, կարողացիք երևանում խորը ցավով»²⁷:

«Ուղեորություն դեպի Անիի ավերակները» երկում Աբովյանը մեծ ցավ է հայանում մանուկների «և նույնիսկ ժողովրդի միջին դասի օգտագործման համար գրած մանկավարժական» իր երկերի հրատարակումը խափանելու համար: Խոսքը կոնկրետացնելով «նախաշավիղին» մասին, գրում է, թե անգամ այն տպագրված է, բայց՝ «անօգուտ ընկած է հենց միայն նրա համար, որ Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը, որ մեր մերձավորագույն իշխանությունն է ...հենվելով իրենց գիտնական համարող հայերից ոմանց կարծիքների վրա, մարդիկ, որոնք, նրանց կշտամբելու համար չէ, որ ասում եմ... գիրքը բաց չեն թողնում հենց միայն նրա համար, որ դա գրված է հատա-րակ ժողովրդին՝ ընդհանուրին հասկանալի լեզվով»²⁸:

Ակամայից հարց է առաջանում, ինչո՞ւ է Աբովյանը «նրանց կշտամբելու համար չէ, որ ասում եմ» նախադասությունը միջանկյալ հրապարակ հանել: Եթե ոչ «նրանց» այսինքն՝ մերձավոր իշխանությունը և նրանց հենարան ծառայող ու «իրենց գիտնական համարող» որոշ հայերի, ապա ո՞ւմ կշտամբելու համար են գրված այդ տողերը: Դրա պատասխանը Աբովյանը տալիս է քիչ ներքև, որտեղ գրում է. «Հանդուցյալ Ֆիդել-աղյուստանտ կոմս Բենկեն-դորֆն ու ժողովրդական լուսավորության մինիստր կոմս Ուլարովը մասնակցություն ցուցաբերեցին այդ գործում»²⁹:

Ուրեմն Աբովյանի կշտամբանքը, նրա բողոքը ոչ թե Թիֆլիսի մերձավորագույն իշխանությանն է վերաբերում, ինչպես նա ստիպված ամեն անգամ ներկայացրել է գործը, այլ լուսավորության մինիստրին և ժանդարմերիայի շեֆին: Իսկ սա արդեն Աբովյանի քաղաքական հայացքների գնահատման հարցում յուրջ կույան է:

Դարձյալ նրանց է նկատի ունեցել Աբովյանը, երբ գրել է. «...իսկ եթե որե՛կ մեկը սեփական նախաձեռնությամբ ցանկանում է այդ անել (իմա՝ դասագրքեր կազմել—Վ. Ղ.), ապա նրանք պատրաստ են ուղղակի խեղդել, փոխանակ աջակցելու և խրախուսելու այդպիսիներին»³⁰: Չբավարարվելով գրածով, նա ծանոթագրության մեջ ավելացրել է. «Ընթերցողները, հարկավ, կարող են կասկածել իշխանությամբ ինձնից բարձր կանգնած անձանց վերաբերյալ իմ այդպիսի չափազանց խիստ դատողությունների մասին, բայց ես կարող եմ այդ ապացույցել փաստերով»³¹: Այնուհետև Աբովյանը մատնացույց է անում Տապակական քերականությունը և նորից գործն այնպես ներկայացնում, որ գործածությունից այն հանելու մեղքը իբր ընկնում է Թիֆլիսի գիմնազիայի խորհրդի վրա:

26 Տե՛ս ԽԱ, ԵԼԺ, հ. 7, էջ 195—196:

27 Նույն տեղում, էջ 390—391:

28 Նույն տեղում, էջ 195:

29 ԽԱ, ԵԼԺ, հ. 7, էջ 152:

30 ԽԱ, ԵԼԺ, հ. 5, էջ 188:

31 Նույն տեղում, տե՛ս տողատակի 2-րդ ծանոթագրությունը:

Այսպիսով, Արուստյանի մանկավարժական երկերի հետ կապված գործի ուսումնասիրությունից պարզ է, որ հետևյալ եզրակացություններին.

1. Արուստյանը պարզ տեսնում էր տեղական հետադարձ ուժերի և ցարիզմի միջև հաստատված ներքին սերտ կապը և տեղական աստիճանավորներին քննադատելու քողի տակ մերկացնում էր ցարական կառավարությանը և մարդկային առաջադիմությունը կաշկանդող նրա ստեղծած ուժերը:

2. Արուստյանի այս գործունեությունը անձամբ հայտնի էր ինչպես ցարական լուսավորության միջնորդներին, այնպես էլ, առաջին հերթին, ժանդարմերիայի շեֆին, որը նրա վրա ոստիկանական հսկողություն էր սահմանել:

3. Արուստյանի նկատմամբ եղած հալածանքը բխում էր ոչ թե հայ հոգևորականության տղիությունից կամ Թիֆլիսի գիմնազիայի խորհրդի պործություններից, այլ ցարական ժանդարմերիայում և լուսավորության միջնորդությունում նրա շուրջը ստեղծած անբարեհուսությունից: Ուրիշ խոսքով՝ այդ հալածանքը ոչ թե տեղական, այլ պետական հետապնդման բնույթ ունի:

4. «Նախաշավիղը» Հասանմյուլների կարգադրությամբ տպագրվել է ամբողջությամբ, իր առաջին, նախնական վարիանտով (բայց երևի շատ սահմանափակ քանակով): Նրա տպագրությունը վերատեսչի ձեռնարկման հետ միաժամանակ խափանվել է Ներքին գործերի բաժանմունքի կողմից: Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը և Արուստյանի տեղական թշնամական միջավայրն այդ պործումը կրկնողական, հրաման կատարողի դեր են խաղացել: Այդ մասին լավատեսիկ են եղել ինքը՝ Արուստյանը և նրա միջավայրը:

5. Պարզվում է նաև, որ Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնը պրավիլու համար համալսարանի կողմից Արուստյանին ուղարկված պործության մեջ Արուստյանի անվան կեղծումը կատարվել է թերևս հայ հոգևորականության միջոցով, բայց Ներքին գործերի բաժանմունքի թեմականների թևակաշարով: Հայագիտական ամբիոնի խնդիրը բարձրացել է ճիշտ այն ժամանակ, երբ արդեն Արուստյանի կազմած դասագրքերի ձեռագրերը ձեռք բերելու համար իրար էին անցել Ներքին գործերի բաժանմունքը, լուսավորության միջնորդությունը և Թիֆլիսի իշխանությունները: Ի վերջո դրանք բոլորը պործն այնպես դասավորեցին, որ Արուստյանը հայագիտական ամբիոնը պահպանելու համար պահանջվող դիսերտացիան գրելու ժամանակ չունենա և ստիպված դրա փոխարեն Պետերբուրգ ուղարկի իր ձեռագրերը: Այդպես էլ արվեց:

Այսպիսով, անառարկելի փաստ պետք է համարել, որ Արուստյանը կառավարության համար որպես «անբարեհուս» և վտանգավոր անձնավորություն՝ հետապնդվել է ցարական պալատի ոստիկանության կողմից: Այդ հոգի վրա տարիներ շարունակ դանազան պատրվակներով նրան արգելել են առանց իշխանությունների հատուկ թույլտվության բացակայելու այն քաղաքից, որտեղ նա աշխատել է: Նման ձևով նրան արգելվել է մեկնելու ոչ միայն վաղուց ի վեր իր երազած Դորպատը, այլ նաև Պետերբուրգ, Սոսկվա, Կազան, անգամ Երևանից Թիֆլիս³²:

32 Տե՛ս Դիպան ԽԱ հ. 1, էջ 174, 176, 178, 187, 219, 221:

В. Дж. КАЗАРЯН

Х. АБОВЯН И ЦАРСКАЯ ЦЕНЗУРА

Резюме

В научной литературе, посвященной Х. Абовяну, господствует точка зрения, согласно которой преследования, проводимые против Х. Абовяна исходили из невежества армянского духовества и неблагоприятного отношения Совета тифлисской гимназии к нему. Иначе говоря, все сводилось к интригам и травле со стороны отдельных лиц, направленных против Абовяна. При этом почти полностью игнорировалась общая политическая ситуация, царствующая в России того времени.

Сторонники этой точки зрения дают положительную оценку рецензии академика Броссе на учебники Абовяна. Между тем, как показывают факты, Броссе своей противоречивой рецензией не только провалил дело издания учебников, написанных Абовяном для детей, но и навлек подозрения на автора со стороны Третьего отделения.

В статье показывается, что преследования против Абовяна на самом деле исходили со стороны царской жандармерии и министерства просвещения в связи с изданием «Нахашавига» Абовяна.

В условиях царской цензуры Абовян не имел возможности открыто выражать свои мысли в печати. В результате этого сложилось впечатление, что его недовольство было направлено не против царизма и органов власти, шефа жандармерии и министра просвещения, а против закавказских местных властей.